ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012 թիվ 18 -Ն*

## ԱՅՐՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Այրում քաղաքի ավագանու կանոնակարգը ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Այրում քաղաքի ավագանու 2008 թվականի նոյեմբերի 11-ի «Ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 20-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ՂԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ
2012թ. նոյեմբերի 08
ք. Այրում

Գ. Եգանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Այրում համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*08 նոյեմբերի 2012 թիվ 19 -Ա*

. ԱՅՐՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և ավագնու որոշմամբ ընդունված կանոնակրգի 65-րդ և 67-րդ կետերի համաձայ( համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Ստեղծել ավագանու մշտական գործող երեք Հանձնաժողով և հաստատել նրանց անհատական կազմը՝

1) Հասարակական հանգստի կազմակերպման, կրթության, մշակույթի, երիտասարդությա( հարցերի և սպորտի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Յարալյան Արկադի
2. Դավթյան Մխիթար
3.Աստիկյան Անդրանիկ
4.Բահադուրյան Մխիթար
5. Սիրադեղյան Համբարձում

2) ֆինանսաբյուջետային , տնտեսական հարցերի և զարգացման ծրագրերի մշտականնն հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Փարսադանյան Գևորգ
2. Աղաբաբյան Համիկ
3. Հարությունյան Հարություն
4. Միրզոյան Մհեր
5 . Աստիկյան Անդրանիկ

3) Քաղաքաշինության , հողօգտագործման , բնապահպանության և կոմունալ հարցերի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Միրաքյան Համբարձում
2. Աղաբաբյան Հասմիկ
3. Բահադուրյան Մխիթար
4. Դավթյան Մխիթար
5. Հարությունյան Հարություն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ԴԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐՁՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Սպիտակի քաղաքապետ Գ. Եգանյան
2012թ. նոյեմբերի 08
Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012թ. թիվ 20 - Ա*

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Այրումի քաղաքապետին՝ Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ, մեկշաբաթյա ժամկետում, սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին:
4. Հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության «Եկամտային հարկի մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կատարել դրույքաչափերի վերահաշվարկ Հայաստանի Հանրապետության կառավարության 31.05.2012թ-ի N 692-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով:
5. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2011թ. նոյեմբերի 7-ի «2012 թվականին Այրումի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների աշխատակացիների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու

մասին» թիվ 13-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և 2-րդ կետի 1-ին ենթակետը:

6. Սույն որոշման 1-ին, 2 և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Ավագանու անդամներ ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱՂՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ՂԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2012թ. նոյեմբերի 08

ք. Այրում

Հավելված 1
Այրումի համայնքի ավագանու
08 նոյեմբերի 2012թ. թիվ 20 -Ա որոշման

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
# ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

կառուցվածքային ստորաբաժանում

1. Ներքին աուդիտի բաժին:

*Այրումի քաղաքապետ* *Գ. Եգանյան*

Հավելված 2
Այրումի համայնքի ավագանու
08 նոյեմբերի 2012թ. թիվ 20 -Ա որոշման

# ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝14
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքայի ն միավոր | դրույք | Պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ) | սոց. վճար (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Քաղաքապետ | 1 | 1.0 | 180,0 | 23,0 |
| | Հայեցողական պաշտոններ | | | | |
| 2. | Քաղաքապետի տեղակալ | 1 | 1.0 | 101.042 | 19.052 |
| 3. | Խորհրդական | 1 | 1.0 | 91,535 | 17,73 |
| | Համայնքային ծառայողներ | | | | |
| 4. | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծած.՝ 1.2-1) | 1 | 1.0 | 101.042 | 19.052 |
| | *Ներքին աուդիտի բաժին* | | | | |
| 5. | Բաժնի պետ | 1 | 1.0 | 97,597 | 18,64 |
| | *Աշխատակազմ* | | | | |
| 6. | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծած.՝ 2.3-1) | 1 | 1.0 | 95,865 | 18,38 |
| 7. | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծած.՝ 3.1-1) | 1 | 1.0 | 91,535 | 17,73 |
| 8. | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծած.՝ 3.1-2) | 1 | 1.0 | 91,535 | 17,73 |
| | Քաղաքացիական աշխատանք իրականացնողներ | | | | |
| 9. | Ընտանիքի և երեխայի համայնքային կենտրոնի համակարգող | 1 | 0.5 | 18,316 | 7,0 |
| 10. | Հավաքարար | 1 | 1 | 36,372 | 9,456 |
| | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | |
| 11. | Հավաքարար | 1 | 1.0 | 40,442 | 10,066 |
| 12. | Վարորդ | 1 | 1.0 | 40,442 | 10,066 |
| 13. | Բանվոր | [illegible] | 1.0 | 40,442 | 10,066 |
| 14. | Պարեկ | [illegible] | 1.0 | 40,442 | 10,066 |

*Այրումի քաղաքապետ* *Գ. Եգանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012 թիվ 21-Ա*

2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն` Այրում համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել «Այրումի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը` համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել «Այրումի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը` համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել «Այրումի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը` համաձայն հավելված 3-ի:
4. Յաշվապահին` Յայաստանի Յանրապետության «Եկամտային հարկի մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կատարել դրույքաչափերի վերահաշվարկ Յայաստանի Յանրապետության կառավարության 31.05.2012թ-ի N 692-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով:
5. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 7-ի «2012 թվականին Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 13-Ա որոշման 1-ին կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերը և 2-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ ստորագրություն Հ. ԱՂԱՔԱՐՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱՂՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ԴԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2012թ. նոյեմբերի 08

ք. Այրում

Հավելված 1
Այրումի համայնքի ավագանու
08 նոյեմբերի 2012թ. թիվ 21 -Ա որոշման

«ԱՅՐՈՒՄ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝15

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | դրույք | Պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ) | սոց. վճար (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 1.0 | 55,164 | 12,275 |
| 2. | Հաշվապահ | 1 | 0.25 | 21,433 | 7,215 |
| 3. | Դաստիարակ | 1 | 0.84 | 45,205 | 10,781 |
| 4. | Դաստիարակ | 1 | 0.84 | 44,339 | 10,651 |
| 5. | Դաստիարակ | 1 | 0.84 | 44,339 | 10,651 |
| 6. | Դաստիարակ | 1 | 0.56 | 21,628 | 7,244 |
| 7. | Դաստիարակի օգնական | 1 | 1.0 | 40,009 | 10,001 |
| 8. | Դաստիարակի օգնական | 1 | 1.0 | 40,009 | 10,001 |
| 9. | Դաստիարակի օգնական | 1 | 1.0 | 40,009 | 10,001 |
| 10. | Երաժշտական դաստիարակ | 1 | 0.7 | 36,329 | 9,449 |
| 11. | Խոհարար | 1 | 1.0 | 45,032 | 10,755 |
| 12. | Խոհարարի օգնական | 1 | 0.5 | 21,433 | 7,215 |
| 13. | Բուժքույր | 1 | 0.75 | 31,175 | 8,676 |
| 14. | Լվ. – հավաքարար | 1 | 1 | 45,032 | 10,755 |
| 15. | Օժանդակ բանվոր | 1 | 0.5 | 21,433 | 7,215 |
| | *Ընդհամենը մեկ ամսում* | | | *552,569* | *142,885* |
| | *Ընդհամենը մեկ տարում* | | | *6630.828* | *1714.62* |

*Այրումի մանկապարտեզի տնօրեն* *Ա. Ամիրզյան*

Հավելված 2
Այրումի համայնքի ավագանու
08 նոյեմբերի 2012թ. թիվ 21 -Ա որոշման

«ԱՅՐՈՒՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 7

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | դրույք | Պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ) | սոց. վճար (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 1.0 | 45,628 | 10,846 |
| 2. | Հաշվապահ | 1 | 0.5 | 30,396 | 8,559 |
| 3. | Գրադարանի վարիչ | 1 | 1.0 | 39,576 | 9,936 |
| 4. | Մարզական մեթոդիստ | 1 | 1.0 | 37,844 | 9,677 |
| 5. | Գեղ. մասի ղեկավար | 1 | 1.0 | 36,372 | 9,456 |
| 6. | Տնտեսվար | 1 | 1.0 | 36,372 | 9,456 |
| 7. | Հավաքարար | 1 | 1.0 | 36,372 | 9,456 |
| | *Ընդհամենը մեկ ամսում* | | | *262,57* | *67,386* |
| | *Ընդհամենը մեկ տարում* | | | *3150,84* | *808,632* |

*Այրումի մշակույթի կենտրոնի տնօրեն* *Ա. Սահակյան*

Հավելված 3
Այրումի համայնքի ավագանու
08 նոյեմբերի 2012թ. թիվ 21-Ա որոշման

«ԱՅՐՈՒՄԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 9

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | դրույք | Պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ) | սոց. վճար (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 1,1 | 62,828 | 13,424 |
| 2. | Հաշվապահ | 1 | 0,25 | 21,433 | 7,215 |
| 3. | ժող. գործիքների ուսուցիչ | 1 | 1.2 | 53.951 | 12.093 |
| 4. | ժող. գործիքների ուսուցիչ | 1 | 1.2 | 53.951 | 12.093 |
| 5. | դաշնամուրի ուսուցիչ | 1 | 1.2 | 53.951 | 12.093 |
| 6. | դաշնամուրի ուուցիչ | 1 | 1.2 | 53.951 | 12.093 |
| 7. | դաշնամուրի ուսուցիչ | 1 | 1.2 | - | - |
| 8. | կոնցերտմեյստեր | 1 | 1.2 | 53.951 | 12.093 |
| 9. | հավաքարար | 1 | 1,0 | 36,372 | 9,456 |
| | *Ընդհամենը մեկ ամսում* | | | *390.388* | *90.558* |
| | *Ընդհամենը մեկ տարում* | | | *4684.656* | *1086.696* |

*Այրումի երաժշտական դպրոցի տնօրեն՝* Ս. Նասիբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012 թիվ 22 -Ա*

ԱՅՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ(ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 -րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել Այրում քաղաքային համայնքի ղեկավարի (քաղաքապետարանի) աշխատակազմի կանոնադրություն՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 29 օգոստոսի 2006թ.-ի թիվ 12-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում գրանցելու պահից:

Ավագանու անդամներ ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ՂԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան
2012թ. նոյեմբերի 08
ք. Այրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012 թիվ 23 - Ն*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Այրում քաղաքի համայնքային սեփականությունը հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների, հանրակացարանների բնակելի տարածքների և հասարական տարածքների վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու դեպքում վարձավճարի չափը՝
   1) բազմաբնակարան շենքերի բնակարանների յուրքանչյուր մեկ քառակուսի մետր տարածքի համար՝ նվազագույնը ամսական 10(տաս) դրամ,
   2) հանրակացարանների բնակելի տարածքների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ նվազագույնը ամսական 7(յոթ) դրամ,
   3) հասրակակական տարածքների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ նվազագույնը ամսական 20(քսան) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2010թ. նոյեմբերի 16-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածքների վարձավճարների չափերը սահմանելու մասին» թիվ 20-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Ավագանու անդամներ ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ԴԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՍ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան
2012թ. նոյեմբերի 08
ք. Այրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012 թիվ 24- Ն*

## 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. 2013թ. ուսումնական տարվա համար «Այրում երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում սովորելու համար ուսման վարձը մեկ աշակերտի համար սահմանել՝
   1) դաշնամուրի բաժնում՝ տարեկան 22500 դրամի չափով, մեկ ամսում՝ 2500 դրամի չափով,
   2) ազգային նվագարանների բաժնում՝ տարեկան 18000 դրամ, մեկ ամսում՝ 2000 դրամի չափով,
   3) 2013թ. համար «Այրում քաղաքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրայի կազմակերպության կողմից գանձվող երեխաների մանկապարտեզ հաճախելու դիմաց վարձի չափը սահմանել ամսական 4000 դրամի չափով:
2. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 7-ի «2012 թվականին Այրում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 15-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Ավագանու անդամներ ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ԴԱՎԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2012թ. նոյեմբերի 08
ք. Այրում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Այրում համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*08 նոյեմբերի 2012 թիվ 25-Ն*

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների համաձայն՝ Այրում համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի

նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանել 3000 դրամ.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղակն տուրքը սահմանել՝

   1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ.

   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

   1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

   2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150000 դրամ.

   3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղակն տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

   1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

   3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000.

   4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

   5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500000 դրամ.

   6) վիճակախաղերի կազմակերպման համար 100000 դրամ:

8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 0 դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

12. Սահմանել տեղական վճարի դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

2) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

3) քաղաքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5000 դրամ.

4) շինարարական և խոշոր եզրափակիչ աղբի հավաքման և փոխադրման համար քաղաքապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ 2000 դրամ:

13. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 7-ի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 14–Ն որոշումը:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

| | | |
|---|---|---|
| Ավագանու անդամներ | ստորագրություն | Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ |
| | ստորագրություն | Ա. ԱՍՏԻԿՅԱՆ |
| | ստորագրություն | Մ. ԲԱՀԱՂՈՒՐՅԱՆ |
| | ստորագրություն | Մ.ԴԱՎԹՅԱՆ |
| | ստորագրություն | Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| | ստորագրություն | Մ.ՄԻՐԶՈՅԱՆ |
| | ստորագրություն | Ա.ՅԱՐԱԼՅԱՆ |
| | ստորագրություն | Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ |
| | ստորագրություն | Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ |

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2012թ. նոյեմբերի 08

ք. Այրում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2012 թիվ 26 – Ա*

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանին *որոշում է.*

1. Այրումի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում առաջադրել ավագանու 5 անդամ:
2. Այրումի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում առաջադրել ավագանու ներքոհիշյալ անդամներին՝
   1) Աղաբաբյան Համիկ,
   2) Բահադուրյան Մխիթար,
   3) Սիրադեղյան Համբարձում,
   4) Հարությունյան Հարություն,
   5) Միրզոյան Մհեր:
3. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2009թ.-ի հունիսի 02-ի « Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ավագանու անդամներին ընդգրկելու մասին » թիվ13-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ
ստորագրություն Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
ստորագրություն Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
ստորագրություն Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
ստորագրություն Մ.ՂԱԿԹՅԱՆ
ստորագրություն Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ստորագրություն Մ.ՄԻՐԶՈՅԱՆ
ստորագրություն Ա.ՅԱՐԱԼՅԱՆ
ստորագրություն Գ.ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ
ստորագրություն Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2012թ. նոյեմբերի 08

ք. Այրում